ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԱՋԱԿՑՈՒՄ Է «ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ ՔՈՒՅՐԵՐ» ՄԱՆԿԱՏԱՆ ՍԱՆԵՐԻՆ

08.12.2021 16:46

Շարունակելով արդեն ձևավորված ավանդույթը ՀՀ փաստաբանների պալատը, 2021թ. դեկտեմբերի 29-ին՝ ժամը 17:00-ին, այցելելու է Երևանում «Մայր Թերեզայի քույրեր» միսիոներների բարեգործական կազմակերպության մանկատուն, որի խնամքի տակ են գտնվում ծանր հիվանդ երեխաներ, որոնցից ծնողները հրաժարվել են: Մանկատան երեխաներին օգնություն տրամադրելու, ինչպես նաև նրանց անձամբ այցելելու ցանկություն հայտնած անձինք կարող են info@advocates.am էլ. հասցեին նամակ ուղարկել կամ անհրաժեշտ իրը ստացականով հանձնել Փաստաբանների պալատի ընդունարանի պատասխանատուին:

Մանկատան երեխաներին անհրաժեշտ են հետևյալ իրերը՝ (անսահմանափակ քանակի)

- անկողնային պարագաներ, չափսերը - (130-60) (160-80) – բամբակ

-գիշերանոց տղաների (4-5 և 7-8 տարեկանի)

- լոգանքի պարագաներ (գել, օճառ...)-Johnson’s Baby

- լվացքի գել

-կրեմ topi

- Similac, milk կաթնային խառնուրդ-1,2,3,4

- BEBI շիլաներ (каша)

- Huggies, Libero, Puffies տակդիրներ (ցանկացած չափերի)

- թաց անձեռոցիկներ

- շոկոլադե կոնֆետներ Kinder (միայն բատոնչիկները, քանի որ երեխաները միայն դա են կարողանում հարմար բռնել)

-խաղալիքներ (ալերգիկ երևույթները բացառելու նպատակով փափուկ խաղալիքներ չեն ընդունվում):

-տոնածառի խաղալիքներ

Մանկատունը օգնում է նաև անապահով ընտանիքներին, ուստի կարող եք ուղարկել նաև հետևյալ իրերը՝

-աթոռակ, մանեժ, քայլակ (կարող է լինել

օգտագործված)

-մանկական հագուստ:

Մանկատունը գտնվում է Նորք-Մարաշ վարչական շրջանում:

Փաստաբանների պալատից կամավորների խումբը մեկնելու է 2021թ. դեկտեմբերի 29-ին՝ ժամը 16:30-ին: Եթե ցանկանում եք նաև մանկատուն այցելել, ապա խնդրում ենք նախապես տեղեկացնել:

Հարգանքով՝

ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })